

### 3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

#### 3.1. Դրամավարկային հիմնական ցուցանիշներ

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի տվյալների, դրամական բազան 2000թ. հունիսի վերջի դրությամբ կազմել է 54404 մլն. դրամ: Տարեսկզբի նկատմամբ այն աճել է 551 մլն դրամով կամ 1,0 տոկոսով և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ համապատասխանաբար՝ 10715 մլն դրամով կամ 24,5 %-ով, իսկ նախորդ ամսվա նկատմամբ՝ 2272 մլն դրամով կամ 4,4 %-ով:

2000թ. հունիսի վերջի դրությամբ դրամական զանգվածը կազմել է 120371<sup>1</sup> մլն. դրամ և տարեսկզբի նկատմամբ աճել է 10917 մլն. դրամով կամ 10,0 %-ով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ համապատասխանաբար՝ 27673 մլն. դրամով կամ 29,9 %-ով, իսկ 2000թ. մայիսի վերջի նկատմամբ աճել է 8328 մլն. դրամով կամ 7,4 %-ով: Նախորդ ամսվա նկատմամբ նշված փոփոխությունը պայմանավորված է զուտ արտաքին և զուտ ներքին ակտիվների աճով համապատասխանաբար՝ 5863 և 2465 մլն. դրամով:

Դրամական զանգվածի աճը 2000թ. հունիս ամսում ուղեկցվել է բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի, ցպահանջ և ժամկետային, խնայողական և արտարժույթով դեպոզիտների աճով համապատասխանաբար՝ 6,2 %-ով (2290 մլն. դրամով), 7,7 %-ով (810 մլն. դրամով) և 8,1 %-ով (5228 մլն. դրամով): Ընդ որում ժամկետային, խնայողական և արտարժույթով դեպոզիտների տեսակարար կշիռը դրամական զանգվածում 2000 թ. հունիսի վերջի դրությամբ կազմել է 58,0 % և տարեսկզբի համեմատ աճել՝ 5,7 տոկոսային կետով:

#### Դրամական զանգվածն ըստ բաղադրատարրերի 2000թ.

(ամսվա վերջի դրությամբ, մլն. դրամ)

	1999թ. դեկտեմբեր	2000թ.					
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս
<b>Դրամական զանգված, ընդամենը</b>	109454	102822	105114	111202	109799	112043	120371
տոկոսով նախորդ ամսվա նկատմամբ	X	93.9	102.2	105.8	98.7	102.0	107.4
տոկոսով ընդամենը	100	100	100	100	100	100	100
այդ թվում՝							
<b>Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամ</b>	42610	34839	34774	36639	35868	36996	39286
տոկոսով նախորդ ամսվա նկատմամբ	X	81.8	99.8	105.4	97.9	103.1	106.2
տեսակարար կշիռը դրամական զանգվածում	38.9	33.9	33.1	33.0	32.7	33.0	32.6
<b>Ցպահանջ դեպոզիտներ</b>	9617	11561	9880	10606	10238	10476	11286
տոկոսով նախորդ ամսվա նկատմամբ	X	120.2	85.5	107.3	96.5	102.3	107.7
տեսակարար կշիռը դրամական զանգվածում	8.8	11.2	9.4	9.5	9.3	9.4	9.4
<b>Ժամկետային, խնայողական և արտարժույթով դեպոզիտներ</b>	57227	56422	60460	63957	63693	64571	69799
տոկոսով նախորդ ամսվա նկատմամբ	X	98.6	107.2	105.8	99.6	101,4	108.1
տեսակարար կշիռը դրամական զանգվածում	52.3	54.9	57.5	57.5	58.0	57.6	58.0

1 ընդգրկում է հաշվարկված տոկոսները

**3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ**

ՀՀ ազգային արժույթով դրամական զանգվածը կազմել է 55912 մլն. դրամ (ներառյալ հաշվարկված տոկոսները), իսկ բանկերի կողմից ներգրավված արտարժույթով դեպոզիտները՝ 64459 մլն. դրամ, ընդ որում, արտարժույթով դեպոզիտները 1999թ. դեկտեմբերի վերջի նկատմամբ աճել են 11435 մլն. դրամով կամ 21,6 %-ով, իսկ նախորդ ամսվա նկատմամբ համապատասխանաբար՝ 5521 մլն. դրամով կամ 9,4 %-ով: Արտարժույթով դեպոզիտների տեսակարար կշիռը դրամական զանգվածում 2000թ. հունիսի վերջի դրությամբ կազմել է 53,6 % և նախորդ տարվա դեկտեմբերի վերջի համեմատ աճել է 5,2 տոկոսային կետով, իսկ 2000թ. մայիսի վերջի համեմատ աճել է 1.0 տոկոսային կետով:


**Դրամական զանգվածի կառուցվածքը**

(%-ով ընդամենի նկատմամբ)

	1999թ.	2000թ.					
	դեկտեմբեր	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս
Դրամական զանգված	100	100	100	100	100	100	100
այդ թվում՝							
ազգային արժույթով	51.6	49.5	47.3	47.7	47.4	47.4	46.4
արտարժույթով	48.4	50.5	52.7	52.3	52.6	52.6	53.6

**Դրամական զանգվածի տարրերի դինամիկան 2000 թ. հունվար-մայիսին**

մլն. դրամ



Դրամական զանգվածի և բազայի վերոնշյալ փոփոխությունների արդյունքում դրամական բազմարկիչը հունիսին հավասարվել է 2,16-ի:

ՀՀ բանկային համակարգի կողմից ներքին տնտեսության նկատմամբ պահանջները (դրամով և արտարժույթով) 2000թ. հունիսի 1-ի դրությամբ կազմել են 104239<sup>1</sup> մլն. դրամ և հունիսի 1-ի համեմատ աճել՝ 652 մլն. դրամով կամ 0,6 %-ով, իսկ տարվա սկզբի նկատմամբ համապատասխանաբար՝ 14112 մլն. դրամով կամ 15,7 %-ով:

<sup>1</sup> ընդգրկված են հաշվարկված տոկոսները

### 3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

ՀՀ կենտրոնական բանկի ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքը<sup>2</sup> 2000թ. հունիսին կազմել է 15 %, և մնացել է նախորդ ամսվա նույն մակարդակին: 666,9 մլն. դրամով:

---

*2 ՀՀ ԿԲ կողմից նախկինում սահմանվող վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոխարեն ներկայումս սահմանվում են ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքներ, որոնցից ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքն իր բնույթով համապատասխանում է նախկին վերաֆինանսավորման տոկոսադրույքին*